

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մարինե Սամվելի Գյուրջյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Гюрджян Марине Самвеловна

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ ПРАВ В ЕВРОПЕЙСКОМ СУДЕ ПО
ПРАВАМ ЧЕЛОВЕКА

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02. “Публичное право - конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление”

Ереван 2015

*Արենախոսության թեման հաստատվել է
«Արեւիկայի» կառավարման ակադեմիայում*

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Գ.Բ. Դանիելյան**

Պաշտոնական ընդհմախոսներ՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ա.Հ. Երիցյան**
իրավաբանական գիտությունների
թեկնածու **Ա.Գ. Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-Ռուսական (սլավոնական)
համալսարան**

Արենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. դեկտեմբերի
11-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.
Երևան, Ալեք Մանուկյան 1):

Արենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. նոյեմբերի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար.

իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Ա Մանասյան

Тема диссертации утверждена в Академии государственного управления РА

Научный руководитель

доктор юридических наук,
профессор **Г.Б. Даниелян**

Официальные оппоненты:

доктор юридических наук,
профессор **А.А Ерицян**

кандидат юридических наук
А.Г. Саргсян

Ведущая организация: **Российско-Армянский (Славянский) университет**

Защита диссертации состоится 11-ого декабря 2015 г., в 14⁰⁰ часов на заседании
специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукиана 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников
библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 9-ого ноября 2015г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

А. А. Манасян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ապենախոսության թեմայի արդիականությունը: Մարդու իրավունքների ու ազատությունների միջազգային պաշտպանության ինստիտուտը իրական հիմքերի վրա դրվեց, երբ 2002թ.-ին Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիան», հնարավորություն ընձեռեց դիմել Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Այս հարցն առավել էական նշանակություն ձեռք բերեց 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում. քանզի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատություններն իրենց անմիջական արտացոլումն ստացան պետության հիմնական օրենքում:

Միջազգային դատական ատյանների առկայությունն ինքնին չի կարող ընկալվել, որպես ազգային դատական իշխանության համակարգի նշանակության նսեմացման անխուսափելի հիմք: Անընդունելի է այն մտայնությունը, ըստ որի ազգային դատական ատյանների կողմից իրականացվող արդարադատության «խոտանը» կարելի է և այնքան մտահոգիչ չհամարել, քանզի դրանք, վերջին հաշվով, շտկվելու են միջազգային դատական ատյանների կողմից: Սակայն նույն այդ մտայնությունը հաղթահարելու և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի գործունեությունն ազգային դատական ատյանների բարելավման երաշխիք դարձնելու խնդրի լուծման համար անհրաժեշտ են ելակետային նշանակություն ունեցող գիտագործնական չափանիշներ:

Այն, որ միջազգային դատական ատյանների և, մասնավորապես Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից իրականացվող արդարադատությունն իր խիստ նկատելի ազդեցությունն է ունենում մեր երկրում ընթացող իրավական զարգացումների վրա, վկայում է նաև այն հանգամանքը, որ վերջին տարիներին ընթացող դատաիրավական բարեփոխումների վեկտորը մեծապես պայմանավորված է նշված դատարանի նախադեպային դատական ակտերում ամրագրված իրավական դիրքորոշումներով: Այս տեսանկյունից ևս խիստ արդիական է դառնում դատական իշխանության սահմանադրական հիմքերի բարելավման տեսանկյունից նշված դատական ակտերում արտացոլված իրավական չափանիշների համալիր հետազոտության խնդիրը:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում իրավունքների պաշտպանության տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունեն նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ձևավորված հարաբերությունները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունը՝ իր օրենսդրությունը հնարավորինս համապատասխանեցնելու Եվրոպական իրավական չափանիշներին: Հետևաբար, Եվրոպական Միության և Եվրոպական պետությունների փորձի մոտարկումը Հայաստանի Հանրապետության համար հանդիսանում է միջազգային պար-

տավորության բաղադրիչ, որի արդյունավետ իրականացումը կանխորոշելու է նշված համագործակցության հետագա ընթացքն ու արդյունքը:

Սահմանադրական բարեփոխումների արդի զարգացումների վերլուծությունը հանգեցնում է նաև այն համոզման, որ միջազգային դատական ատյանների նախադեպային դատական ակտերի ազդեցության շրջանակներն աստիճանաբար ընդլայնվում են՝ ընդգրկելով նաև ազգային իրավական ակտերի սահմանադրականությանն առնչվող իրավական դիրքորոշումների վերախմաստավորման անհրաժեշտությունը: Միանգամայն նոր իրողություն է սահմանադրական բարեփոխումների տեսանկյունից նաև ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերի իրավական արժեքին առնչվող խնդիրները:

Ելնելով վերոգրյալից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեության համատեքստում մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության գործընթացը արդիական է ու հրատապ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այնպիսի չափանիշների մշակմամբ, որոնք կնպաստեն նշված ոլորտում միջազգային լավագույն փորձի արդյունավետ մոտարկմանն ու իմպլեմենտացիային:

Ներազոտության թեմայի գիտական հետազոտման ասպիճանը: ՄԻԵԴ-ում և մարդու իրավունքների պաշտպանության այլ միջազգային մարմիններում անձի սահմանադրական իրավունքների իրացման հիմնախնդիրները, պաշտպանության այդպիսի կառուցակարգերին համահունչ ազգային ինստիտուտներ ձևավորելու, ինչպես նաև ազգային իրավական համակարգի վրա ՄԻԵԴ-ի վճիռների ներգործության եղանակներն ու սահմանները դեռևս համալիր ու արդիական ասպեկտներով չեն ուսումնասիրվել հայրենական իրավագետների կողմից: 1990-ականների վերջերից սկսած նշված խնդիրները տարբեր ասպեկտներով եղել են հայ իրավագետների և արակտիկ իրավաբանների հետազոտության ու քննարկման առարկա: Կատարվել են որոշակի գիտական հետազոտություններ՝ նվիրված Եվրոպական կոնվենցիայի առանձին դրույթներին և դրանց ազդեցությանը ՀՀ օրենսդրության վրա: Նշված խնդիրների հետազոտությանն անդրադարձել են հայ իրավագետներից Գ.Հարությունյանը, Ա.Հարությունյանը, Վ.Հովհաննիսյանը, Վ.Այվազյանը, Դ.Ավետիսյանը, Ա.Մանասյանը և այլք: Որոշ հատվածներով նշված հարցադրումներին են առնչվում նաև վերջին շրջանում Ն.Առաքելյանի, Ա.Հայրապետյանի և այլոց պաշտպանած գիտական թեզերը: Վերը նշված հարցադրումների առանձին հատվածների առնչությամբ գիտական հետազոտություններ են իրականացրել Դ.Գ. Կուրդյուկովան, Ա.Ա. Կարնիլիան , Դ.Վ. Կրասիկովան, Ռ. Առնոլդը, Կ. Էվինգը, Դ. Ֆելդմանը, Դ. Կոմերսը և այլք:

Այնուամենայնիվ, այդ բոլոր հետազոտություններում, դեռևս համալիր հետազոտության նյութ չեն դարձել Եվրոպական կոնվենցիայի դրույթների ազգային իրավունքի նորմերում համարժեք արտացոլման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, դրանց սահմանադրորեն ամրագրման կամ արդեն իսկ ամրագրված իրավունքների իրացման յուրահատկությունները, նշված մի-

ջազգային դատական ատյանի գործունեության համատեքստում մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները, այդ տեսանկյունից գիտագործնական արժեք ունեցող այնպիսի հարցադրումները, որոնք առնչվում են նաև տվյալ միջազգային դատական ատյանի և սահմանադրական դատարանի փոխհարաբերության, սահմանադրական բարեփոխումների համար նախադեպային դատական ակտերի նշանակության և նմանաբնույթ այլ խնդիրներին:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է համակողմանի ուսումնասիրության և վերլուծության ենթարկել իրավական այն խնդիրները, որոնք անմիջականորեն առնչվում են հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար ՄԻԵԴ կամ այլ միջազգային իրավապաշտպան իրավասու մարմին կամ դատական ատյան դիմելու ընթացակարգերին, այդ ոլորտում առկա գիտագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին, միջազգային դատական ատյանների նախադեպային դատական ակտերի և ազգային իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի փոխհարաբերության հարցադրումներին:

Աշխատանքի խնդիրներից է հետազոտության առարկային առնչվող ասպեկտներով ներպետական նյութական և դատավարական իրավական հիմքերի հետագա զարգացման հեռանկարների վերհանումը, իրավական ակտերի նախազօծերի հիմնադրույթների մշակումը և իրավակիրառ պրակտիկայի արմատական բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Ատենախոսության կարևոր խնդիրներից է նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրավունքների պաշտպանության ոլորտում դրական փորձի համակողմանի ուսումնասիրությունն ու դրա արդյունավետ տեղայնացման խնդրի լուծմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Կարևորագույն խնդիրներից է մարդու իրավունքների ու ազատությունների իրացման միջազգային ու վերպետական երաշխիքների ճշգրիտ ազդեցության պարզաբանումը՝ այն հաշվով, որպեսզի հիշյալ կառուցակարգային ինստիտուտները չնպաստեն ազգային դատական ատյանների ու հանրային իրավասու մարմինների նկատմամբ անհարկի անվստահության մթնոլորտին, կանխվի այն իրավական մշակույթի ձևավորումը, որի պայմաններում իրենց խախտված իրավունքների համար հանրային իշխանության մարմիններին ու դատական ատյաններին դիմող անձինք այդ ընթացակարգը սոսկ դիտարկեն որպես անխուսափելի, սակայն պարտադիր փուլ՝ ներպետական պաշտպանության միջոցները սպառելու և միջազգային դատական ատյաններին դիմելու իրավունք ձեռք բերելու տեսանկյունից:

Ատենախոսությունում, որպես հիմնարար նպատակ, քննարկվում և պարզաբանվում է ՄԻԵԴ-ի և ազգային դատական ատյանների և վարչարարության իրականացնող հանրային իշխանության մարմինների փոխհարաբերու-

յան այն ասպեկտները, որոնք վերաբերում են հետազոտությամբ առաջադրված խնդրի համարժեք լուծմանը: Մասնավորապես, նպատակներից մեկն է մշակել և պաշտպանության ներկայացնել դատական ատյաններին և վարչարարություն իրականացնող հանրային իշխանության մարմիններին համարժեք խորհրդատվություն մատուցելու խնդրի լուծման համար պատասխանատու կառուցակարգի իրավական հիմքերը:

Արենախոսության տեսական հիմքը կազմել են ինչպես մեր հայրենակիցներ Շ.Տ. Պետրոսյանի, Վ.Հ.Հովհաննիսյանի, Վ.Այվազյանի, ռուս գիտնականներ Վ.Ա. Կանաշևսկու, Լ.Բ.Ալեկսեևայի, Յու.Յու.Բերեստևսկի, Բ.Գ.Բեսսարաբովի, Բ.Բաուրինսի, Վ.Վ.Բոյցովայի, Դ.Գոմինի, Պ.Ա.Լապտևի և այլոց, այնպես էլ արևմտյան գիտնականներ Ռ. Առնոլդի, Կ. Էվինգի, Դ. Ֆելդմանի, Դ. Կոմերսի և այլոց ուսումնասիրությունները:

Արենախոսության փորձառնական (էմպիրիկ) հիմքը կազմել են ՄԻԵԴ-ի, առանձին միջազգային դատական ատյանների ու միջազգային մարմինների, սահմանադրական դատարանի որոշումները, ինչպես նաև եվրոպական առանձին պետությունների սահմանադրական և սահմանադրական արդարադատություն իրականացնող դատական ատյանների, մյուս դատարանների այն որոշումները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են մարդու իրավունքներին և ազատություններին:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը հանդիսացել են գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, քննադատական, վերլուծական, համակարգային-կառուցվածքային, այնպես էլ մասնավոր մեթոդները՝ ձևական-տրամաբանական, իրավական նորմերի քերականական, տրամաբանական, պատմական և համակարգային մեկնաբանման մեթոդները: Աշխատանքում լայնորեն կիրառվել է համեմատական-իրավական մեթոդը:

Արենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

Արենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ նոր ասպեկտներով համալիր հետազոտության նյութ են դաձել ՄԻԵԴ-ում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այդ համատեքստում միջազգային դատական ատյանների և ազգային դատական մարմինների, ինչպես նաև հանրային իշխանությամբ օժտված իրավատու մարմինների փոխհարաբերության սահմանադրաիրավական հիմքերը, բացահայտվել են ազգային իրավական համակարգի և իրավակիրառ պրակտիկայի նկատմամբ ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերի, ինչպես նաև այլ միջազգային-իրավական ակտերի ներգործության արդի օրինաչափությունները:

Արենախոսության նպատակների և խնդիրների շրջանակներում իրականացված հետազոտության հիման վրա պաշտպանության են ներկայացվել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Իրավունքների պաշտպանության համընդհանուր ու ողջամտորեն ե-

րաշխավորված համակարգի ձևավորման շահը թելադրում է ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերի կիրառման շրջանակների արմատական ընդլայնման անհրաժեշտություն, ինչն իրատեսական կլինի այնպիսի կառուցակարգերի ներդրմամբ, որոնց միջոցով այն կընդգրկի ոչ միայն արդարադատության, այլև իրավաստեղծ ու վարչարարության ոլորտները: Ընդ որում, չխաթարելով արդարադատության սահմանադրական սկզբունքները, նպատակահարմար է համարվում կազմավորելու խորհրդատվական-փորձագիտական ազգային կենտրոն, որը մասնագիտական եզրահանգումներ կներկայացնի կոնկրետ գործերով կիրառման ենթակա ազգային օրենսդրության նորմերի և հիշյալ նախադեպային դատական ակտերում ամրագրված իրավական դիրքորոշումների համապատասխանության առնչությամբ:

2. Նկատի ունենալով, որ հայրենական արդարադատության համակարգում ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերի կիրառումն առանձնանում է անհարկի ձևախեղումներով (մասնավորապես, այդ աղբյուրների վրա հղում կատարելը, թերևս, կրում է ձևական բնույթ, ինչի արդյունքում այդպիսի հղումներ պարունակող դատական ակտերի շուրջ 17 տոկոսը բեկանվել է վերադաս դատական ատյանների կողմից), նպատակահարմար է մի շարք օրենսդրական նորամուծությունների արդյունքում ապահովել այնպիսի ընթացակարգեր, որոնք կպարտավորեցնեն դատական ակտերում հնարավորինս սպառիչ պատճառաբանումներով ու հստակ պարզաբանումներով անդրադառնալ այն հարցին, թե ինչ իրավական չափանիշներով է ընտրվել այս կամ այն նախադեպային ակտը, համապատասխան՞ում է այն, արդյոք, քննվող գործի հանգամանքներին: Արդարադատության մատչելիության սահմանադրական սկզբունքից բխում է նաև այն, որ դատական ակտում պարտադիր պետք է անդրադարձ արվի կողմի մատնանշած ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտում արտացոլված դիրքորոշման վերաբերելիությամբ:

3. Նպատակահարմար է համարվել սահմանել դատավորների մասնագիտական պատրաստվածության, այդ թվում՝ օրենսդրության իրազեկվածության գնահատման հստակ չափանիշների մշակման և ներդրման համակարգ, ինչը հնարավորություն կտա յուրաքանչյուր դատական սխալի համարժեք գնահատման համար պարզել «ողջամիտ իրազեկվածության» աստիճանը: Այս համակարգը միտված կլինի ինչպես դատական սխալների դեպքում դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերի հստակեցման, այնպես էլ նրանց մասնագիտական վերապատրաստման դասընթացների համար առավել նպատակասլաց ծրագրեր մշակելու տեսանկյունից: Բնականաբար, հարկ կլինի սույն խնդրին համահունչ վերանայել նաև արմատական փոփոխություններ նախատեսող նոր օրենքների ուժի մեջ մտնելու, այդ կապակցությամբ դասընթացներ ծրագրավորելու կարգերը և այլն:

4. Հաշվի առնելով Հայաստանի տարածաշրջանային յուրահատուկ խնդիրները, դրանք համարժեք հաղթահարելու անհրաժեշտությունն ու, միաժամանակ հայրենական իրավական համակարգի ձևավորման հիմնա-

րար նախադրյալների առանձնահատկությունները, առաջարկվել է վերանայել օտարերկրացիների սահմանադրական կարգավիճակը՝ դարձնելով այն հնարավորինս իրատեսական ու հիշյալ համատեքստում բացառելով Հայաստանի քաղաքացիների իրավունքների երաշխավորման անհարկի վերապահումներն ու խոցելի դարձնելով մարդու իրավունքների պաշտպանությունը: Այդ նկատառումով նպատակահարմար է նախապատվությունը տալ օտարերկրյա քաղաքացիների իրավունքների սահմանմանը՝ փոխադարձության սկզբունքի հենքով՝ միաժամանակ նախատեսելով այնպիսի վերապահումներ, որոնք էապես չեն խաթարի հիշյալ սկզբունքը, սակայն կհանդիսանան վերը նշված հիմնահարցերով թելադրված մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտ սահմանափակման հիմքեր: Ատենախոսությունում այն դիրքորոշումն է հիմնավորվել, որ բացարձակ «փոխադարձության սկզբունքը» կիրառելի չէ այն երկրների իրավական համակարգերի պարագայում, որոնք ունեն անվտանգության լրջագույն խնդիրներ: Միաժամանակ, այդ սկզբունքից վերապահումները հարկ է ընտրել այն նկատառումով, որպեսզի չխաթարվի յուրաքանչյուր պետության ինքնիշխանությունը: Հիմնավորվել է նաև, որ այդպիսի իրավական կարգավորումն առավել համահունչ կլինի ՄԻԵԴ-ում դիմումների քննության հիմնարար ուղղվածությանը:

5. ՄԻԵԴ-ում գործերի քննությունը կարող է առավել երաշխավորված լինել, եթե ներազգային օրենսդրությամբ սահմանվեն այնպիսի ընթացակարգեր, որոնք կբացառեն ՄԻԵԴ-ի հետ փոխհարաբերություններում, հատկապես, ազատությունից զրկված անձանց իրավունքների անհարկի միջամտության որևէ հնարավորություն: Մասնավորապես, ՀՀ քրեակատ. օր-ում նպատակահարմար է համարվել սահմանել, որ դատապարտյալի և դատական ատյանների, այդ թվում նաև ՄԻԵԴ-ի միջև նամակագրությունը ոչ մի պարագայում ենթակա չէ զննության՝ դրանց բովանդակությունը բացահայտելու իմաստով: Նշված օրենսդրական դրույթը նպատակահարմար կլինի տարածել նաև այն գրագրությունների վրա, որոնք ուղղված կլինեն պետական իրավասու մարմիններին, դրանց պաշտոնատար անձանց կամ դատական ատյաններին և կվերաբերեն դատական կամ արտադատական կարգով վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության վիճարկմանը:

6. Թեպետ պաշտոնապես ՄԻԵԴ-ը չի ընդունում, որ վերջին տասնամյակների ընթացքում ինտեգրացիոն գործընթացների արդյունքում Եվրոպական խորհրդի կազմում նոր պետությունների ի հայտ գալը հանգեցրել է միևնույն իրավական և փաստական հանգամանքների պարագայում միմյանցից էապես տարբերվող վճիռներ կայացնելու պրակտիկային, այնուամենայնիվ, այդպիսի վճիռներն իրողություն են, որոնց անդրադարձ կա ատենախոսությունում: Միևնույն ժամանակ, առաջ է քաշված այն դիրքորոշումը, ըստ որի՝ դրանց առկայությունը չի կարելի որակել, որպես երկակի չափանիշների կիրառում, քանզի արտաքուստ միմյանցից տարբերվող դատական ակտերում համամասնորեն հաշվի են առնված կոնկրետ երկրում ձևավորված կոռուպ-

ցիոն և այլ այնպիսի դիսկերը, որոնք անմիջականորեն կանխորոշում են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ընդհանուր վիճակը: Հիշյալ գործոնների հաշվառման խնդիրը երբեմն կարող է հանգեցնել՝ հիմնավորվածության տեսանկյունից խիստ խոցելի դատական ակտերի, սակայն դա առավել նվազ արժեք ունի, քան այն արդյունքները, որ ձեռք են բերվում հիշյալ դիրքորոշման պարագայում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերը մշակելիս, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական, քրեական, քրեակատարողական, քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության օրենսգրքերում անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ կատարելիս: Աշխատության եզրակացություններն ու դրույթները կարող են օգտագործվել կառուցակարգային բարեփոխումներ իրականացնելուն միտված պետական քաղաքականություն իրականացնելիս: Դրանք գիտագործնական արժեք կարող են ունենալ նաև դատական տարբեր առյանների համար՝ Եվրոպական կոնվենցիայով, Սահմանադրությամբ և այլ նորմատիվ ակտերով ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների խախտումներին առնչվող գործերը քննելիս և լուծելիս:

Ձուտ տեսական հետազոտությունների արդյունավետության նկատառումով ատենախոսությունը, որպես մարդու սահմանադրորեն ամրագրված իրավունքների միջազգային պաշտպանությանը նվիրված համալիր ուսումնասիրություն, նշանակություն կարող է ունենալ սահմանադրական իրավունքի գիտության, ինչպես նաև գիտության առանձին ճյուղերը նոր գիտական մոտեցումներով զարգացնելու տեսանկյունից: Աշխատանքը կարող է տեսական հիմք հանդիսանալ դրանում արծածված հարցերի գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել նաև ուսումնական:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, դրանք՝ հիմնական զեկուցողներին ուղղված հարցերի, ինչպես նաև քննարկումների ընթացքում ելույթների շրջանակներում հնչեցվել են մի շարք գիտաժողովներում, որոնցում հեղինակը մասնակցել է, որպես հրավիրված փորձագետ: Պաշտպանության ներկայացված հիմնադրույթների այն հատվածը, որը վերաբերում է գործնականում կառուցակարգային և օրենսդրական բարելավումներին, համապատասխան հիմնավորումներով գրավոր առաջարկությամբ ներկայացված է Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կատարված է ԲՈԿ-ի կողմից սահմանված ծավալով, կառուցվածքը համապատասխանում է հետազոտության նպատակներին և խնդիրներին: Այն բաղկա-

ցած է ներածությունից, ինը պարագրաֆներից, որոնք ներառված են երեք գլուխներում, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվում է թեմայի ընտրության արդիականությունը, աշխատանքի նպատակներն ու խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, ատենախոսության տեսական և նորմատիվ հիմքերը, ատենախոսության փորձառնական և մեթոդաբանական հիմքը: Ներածությունում հիմնավորվում է գիտական նորոյթը և բացահայտվում պաշտպանության ներկայացվող հիմնական եզրահանգումները: Ներածությունը տեղեկություններ է պարունակում նաև հետազոտության տեսական և գործնական նշանակության և հետազոտության արդյունքների փորձարկման վերաբերյալ:

Առաջին գլուխը՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դափարանում մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության իրավական հիմքերն ու բովանդակությունը», կազմված է երեք ենթավերնագրից:

Առաջին ենթավերնագրում՝ «Միջազգային ապյաններում մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության իրավունքի հիմքերը», անդրադարձ է կատարվել ՄԻԵԴ ձևավորման գործընթացին, նրա զարգացման փուլերին, պատմությանը: Պատմական անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի ընդունման, զարգացման և ընդլայնման մանրամասներին: ՄԻԵԴ կարգավիճակն ուսումնասիրելիս, ընգծվել է նրա՝ որպես ներպետական դատական համակարգի զսպիչ ազդակի դերը՝ միևնույն ժամանակ բացառելով ՄԻԵԴ-ի ազգային դատարանների նկատմամբ վերադաս ատյան հանդիսնալու փաստը: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան որոշ իրավագետների կարծիքով ամբողջ աշխարհում ամենակատարյալ ու արդյունավետ պայմանագիրն է մարդու իրավունքների որլորտում: Դրա դրույթներն իրացվում են համապարտադիր իրավասություն ունեցող վերպետական դատական ատյանի՝ ՄԻԵԴ-ի մշտական գործունեության միջոցով, որն իրավագոր է տալ միասնական մեկնաբանություն Եվրոպական կոնվենցիայի մարդու ազատությունների ու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության վերաբերյալ դրույթներին և գործնականորեն կիրառել դրանք: Հենց այս հատկության շնորհիվ է, որ ՄԻԵԴ-ը, տարիներ ի վեր պահպանելով հեղինակությունը, օրըստօրե ընդլայնում է իր իրավագորության տակ գտնվող երկրների շրջանակը:

Երկրորդ ենթավերնագրում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական միջոցները՝ միջազգային իրավական համակարգի համապեքստում», խոսվում է ժամանակակից այն միջոցների մասին, որոնք հնարավորություն են ընձեռում առավելագույնս պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները:

Մարդու իրավունքներն ու ազատությունները, Սահմանադրությամբ հռչակելով բարձրագույն արժեք՝ Հայաստանի Հանրապետությունը տուրք տվեց ժողովրդավարական հանրության կողմից միջազգային այնպիսի ակտերում ամրագրված պահանջներին, ինչպիսիք են՝ 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային հռչակագիրը, ինչպես նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային հռչակագիրը: Զգալի նշանակություն ունեցավ ՀՀ կողմից 2002թ. ապրիլի 26-ին վավերացված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիան»:

Վերը նշված միջազգային փաստաթղթերը և ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածը ելնում են այն գաղափարից, որ մարդու իրավունքներն ու ազատություններն առաջանում և գոյատևում են ոչ թե պետության հայեցողությամբ, այլ՝ ինքնաբերաբար՝ որպես բնության օրինաչափություն, իսկ իրավունքների և ազատությունների հիմքը մարդկային արժանապատվությունն է:

Իրավունքների պաշտպանության թերևս ամենատարածված, լեգիտիմ և արդյունավետ միջոցը դատական պաշտպանությունն է: Դատական պաշտպանության շրջանակներում ներպետական դատական համակարգի և իշխանության մարմինների կայացրած որոշումներից դժգոհ մնալու դեպքում և երբ սպառվել են ներպետական արդարադատության ու իրավունքների պաշտպանության բոլոր միջոցները, ցանկացած անձ իրավունք ունի դիմել Մարդու իրավունքների Եվրոպական դատարան՝ պահպանելով այն հիմնական կանոնները, նախապայմանները, որոնք հարկավոր են գործը վարույթ ընդունելու համար:

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը պահանջում է պետություններից յուրաքանչյուրի համար ապահովել ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ կառուցակարգեր: Իսկ Եվրոպական կոնվենցիայով նախատեսված հանձնարարականը անդամ պետություններից յուրաքանչյուրից, ով ունի Եվրոպական կոնվենցիայի խախտման առումով հիմնավոր վեճ, պահանջում է իրենց ներպետական իրավական դաշտում ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ համակարգ:

Երրորդ ենթավերնագրում՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների իրավական արժեքը՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական համակարգի ձևավորման գործընթացում», ներկայացվում է դատական ակտերի իրավաբանական ուժն ու կատարման եղանակները, կոնկրետ երկրի ներպետական իրավական համակարգում դրանց կիրառման ընթացակարգերն ու եղանակները, ինչպես նաև կիրառման բովանդակությունն ու սահմանները:

ՄԻԵԴ-ի վճիռները նախադեպային նշանակություն ունեն հետագայում քննվող գործերի համար, թեև Եվրոպական կոնվենցիան ինքնին ՄԻԵԴ-ին չի կաշկանդում իր նախորդ վճիռներով: Եվրոպական կոնվենցիան ՄԻԵԴ-ին

ընձեռել է ոչ միայն Եվրոպական կոնվենցիայի դրույթները կիրառելու, այլև դրանք մեկնաբանելու իրավասությամբ: *Կարծում ենք*, ՄԻԵԴ-ը Եվրոպական կոնվենցիային մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը երաշխավորելու նպատակով մշակում և ամրագրում է իրավական դիրքորոշումներ, որոնցում ձևավորված մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչներն ընդհանուր են բոլոր մասնակից պետությունների համար, ուստի ՄԻԵԴ-ի այս կամ այն մասնակից պետության առնչությամբ կայացված վճռում արտահայտած իրավական դիրքորոշումը հավասարապես, առանց երկակի չափորոշիչների, կիրառելի է ցանկացած այլ պետության առնչությամբ կայացվող վճռում:

ՄԻԵԴ-ի կողմից կոնվենցիոն եզրույթների ու հասկացությունների մեկնաբանության արդյունքում ձևավորվում են իրավական դիրքորոշումներ, որոնք հետագայում օգնում են ՄԻԵԴ-ին առավել արդյունավետ և օպերատիվ կարգով քննել կոնկրետ գործերը, ինչը, *մեր կարծիքով, նպաստում է նաև արդարադատության մատչելիության սկզբունքի առվել հեղուկական ապահովմանը*:

Անհրաժեշտ է ընդգծել, որ միջազգային դատական ատյանների ակտերի կատարման և կիրառման հիմքում դրվում են ոչ թե դասական իմաստով համապարտադիր նորմատիվ պահանջները, այլ՝ տասնամյակների ընթացքում ձևավորված իրավական ավանդույթները, իրավական մշակույթը, որոնք գործնականում ավելի առանցքային նշանակություն ու արժեք ունեն, քան բազմաթիվ նորմատիվ իրավական ակտերում ամրագրված նորմերը: Սակայն, երբ արդի որոշ մարտահրավերները միտված են արդեն իսկ ձևավորված իրավական մշակույթը խիստ վիճահարույց ու անընդունելի որակելու, *կարծում ենք*, հարկ է ՄԻԵԴ-ի դատական ակտերի կիրառմանն առնչվող հարաբերությունները հնարավորինս սեղմ ժամկետներում դարձնել հստակ կանոնակարգման առարկա:

Երկրորդ գլուխը՝ «Եվրոպական արդարադատության հասանելիությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու կարգը և իրավական հիմքերը», կազմված է երեք ենթավերնագրից, որոնցից առաջինում՝ ***«Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի առարկայական ընդդատության արդի խնդիրները»***, խոսվում է անձանց շրջանակի մասին, ովքեր կարող են ՄԻԵԴ գանգատ ներկայացնել, բացահայտվում են այն հիմքերը և դեպքերը, որոնց առկայության դեպքում անձն իրավունք կունենա ՄԻԵԴ-ում գանգատարկել ներպետական դատարանի վճիռը:

Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան վավերացնելուց հետո ՀՀ իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձ կարող է գանգատ ներկայացնել ՄԻԵԴ: ՄԻԵԴ-ն իրավասու է քննել միայն այնպիսի վեճեր, որոնք գտնվում են իր առարկայական ընդդատության ներքո (ratione materiae): Նա կարող է քննության ընդունել մարդու այնպիսի ազատությունների ու իրավունքների ոտնահարման, խախտման մասին բողոքներ, որոնք

նախատեսված են 1950թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով» և դրան կից Արձանագրություններով: Եվրոպական կոնվենցիան ժամանակի ընթացքում զարգացում է ապրել՝ մշտապես լայնացնելով իր կողմից երաշխավորվող ազատությունների ու իրավունքների ցանկը, ինչպես օրինակ՝ սեփականության պաշտպանության իրավունքը, կրթության իրավունքը և այլն: Այսպիսով՝ ՄԻԵԴ-ի առարկայական ընդդատությունը հստակ սահմանված չէ, այլ մշտապես զարգացող, մարդու իրավունքների պաշտպանության որակի բարձրացմանն ուղղված գործընթաց է:

Սույն ենթավերնագրի շրանակներում առավել հանգամանալից անդրադարձել ենք Եվրոպական կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով նախատեսված ու ՄԻԵԴ-ում դատական պաշտպանության ենթակա հետևյալ իրավունքներին և հիմնարար ազատություններին. *կյանքի իրավունք, փանջանքների ենթարկելու արգելքի սկզբունք, մարդու ազատության իրավունք, արդարացի դատական քննության իրավունք, անմեղության կանխավարկածի սկզբունք, դատական քննության հրապարակայնության սկզբունք, հավասարության սկզբունք, խոսքի, խղճի, մտքի ու կրոնի ազատության իրավունք, խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունք, սեփականության իրավունք և այլն:*

ՄԻԵԴ-ի առարկայական ընդդատության մասին խոսելիս, պետք է փաստել, որ Եվրոպական կոնվենցիայում ամրագրված իրավունքների ու ազատությունների բացարձակ մեծամասնությունը ներառված է ՀՀ սահմանադրության մեջ:

Երկրորդ՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դատարան դիմելու իրավական հիմքերը» ենթավերնագրում ներկայացվել են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում ցանկացած անձ, ոչ կառավարական կազմակերպություն կամ անհատների խումբ իրավունք ունի դիմել ՄԻԵԴ:

Համաձայն Եվրոպական կոնվենցիայի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը իրավասու է քննելու երկու խումբ վեճեր՝ Եվրոպական կոնվենցիայի անդամ պետությունների միջև և մասնավոր անձանց ու անդամ պետության միջև:

ՄԻԵԴ-ը քննության է առնում այն գանգատները, որոնք վերաբերում են պետության գործողություններին կամ այն հարցերին, որոնց համար պետությունը Եվրոպական կոնվենցիայի համաձայն, պատասխանատվություն է կրում: Հետևաբար, մասնավոր անձինք չեն կարող գանգատարկել այլ մասնավոր անձանց գործողությունները: Բացի այդ, պետությունը և նրան ներկայացնող պաշտոնատար անձինք ու տեղական ինքնակառավարման մարմինները, չեն կարող դիմումատուներ լինել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում:

ՄԻԵԴ-ի կողմից բողոքն ընդունելու համար դիմումատուն պետք է լինի «խախտման զոհ» կամ համարվի «պոտենցիալ զոհ», այսինքն՝ խնդրո առար-

կա գործողությունից կամ անգործությունից ուղղակիորեն տուժած անձ:

Քանի որ միջազգային պայմանագրերը, այդ թվում Եվրոպական կոնվենցիան, հետադարձ ուժ չունեն, ՄԻԵԴ-ը քննում է միայն այն անձանց բողոքները, ովքեր Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների իրավախախտումներից տուժել են Եվրոպական կոնվենցիան ստորագրելուց և վավերացնելուց հետո:

Երրորդ՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դափարանին ուղղված դիմումների բովանդակությանն ու ձևին ներկայացվող պահանջների գիտագործնական ասպեկտները» ենթավերնագիրը անդրադառնում է ՄԻԵԴ ներկայացվող դիմումների բովանդակությանը և ձևին ներկայացվող պահանջներին:

Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածը սահմանում է, որ ՄԻԵԴ-ը գործը կարող է քննության ընդունել միայն արդարատատության ազգային մարմինների կողմից վերջնական որոշման կայացման պահից վեց ամսվա ընթացքում և միայն այն դեպքում, եթե դիմումատուն արդեն իսկ սպառել է իր իրավունքների պաշտպանության ներպետական բոլոր իրավական միջոցները:

Որպեսզի գանգատը ՄԻԵԴ-ի կողմից ընդունվի քննության, դիմումատուն միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան, պետք է սպառած լինի իր խախտված իրավունքների պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Որպեսզի բողոքն ընդունվի ՄԻԵԴ-ի կողմից, այն պետք է համապատասխանի ևս մի քանի ֆորմալ պահանջների, որոնք նկարագրված են Եվրոպական կոնվենցիայում և ՄԻԵԴ-ի Կանոնակարգում: Մասնավորապես, դիմումատուն պարտավոր է ժամանակին պատասխանել ՄԻԵԴ-ի Քարտուղարության կողմից ուղարկված հարցումներին, մշտապես հաղորդի ճշմարիտ տեղեկություններ ներպետական դատական և իրավապահ մարմիններում իր գործի տեղաշարժի մասին:

Բողոքը պետք է ներկայացվի ՄԻԵԴ-ի կողմից հատուկ մշակված ձևաթղթի օրինակով անգլերեն կամ ֆրանսերեն լեզվով, որում պետք է նշվեն գործի բոլոր փաստական հանգամանքներն և այն կոնվենցիոն իրավունքները, որոնք խախտվել են: Բողոքը պետք է բովանդակի հղումներ Եվրոպական կոնվենցիային և նրան կից Արձանագրություններին, արտահայտի դիմումատուի պահանջը, նրա կողմից ներկայացվող բողոքի իրավաչափության հիմքերը, փաստարկներն ու ապացույցները, ենթադրվող փոխհատուցման գումարի հստակ հաշվարկը:

Երրորդ գլուխը՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դափարանի վճիռների և որոշումների կայացման և կադրման գործընթացի իրավական կարգավորումը», բաղկացած է երեք ենթավերնագրերից:

«ՄԻԵԴ-ի հիմնական գործառույթները՝ վճիռներ և որոշումներ կայացնելու ու դրանք կադրելու փուլում» վերադառնալու առաջին ենթավերնագիրը անդրադարձ է կատարում այն հիմնական գործառույթներին, որոնք

իրականացվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից դատական ակտերի կայացման ու կատարման ողջ ընթացքում:

Գործի ընդունելիության հարցը որոշելու համար ՄԻԵԴ-ը համապատասխան երկրի կառավարությանը հաղորդագրություն է ուղարկում՝ խնդրելով տրամադրել գործի էության վերաբերյալ իր տեսակետը: Այս գործընթացն ուղղված է դատաքննության ընթացքում կողմերի հավասարությունն ապահովելուն:

Դատաքննության առաջին փուլը, որպես կանոն, ընթանում է գրավոր ձևով, որի վերջում ՄԻԵԴ-ը որոշում է կայացնում գործով լուսմներ անցկացնելու մասին: ՄԻԵԴ-ում լուսմներ հազվադեպ են լինում՝ հաճախ բավական է ստանալ կողմերի բացատրությունները: Յուրաքանչյուր գործով դատավորներն իրենք են որոշում այդ հարցը և նրանց փաստարկները չեն հրապարակվում:

Եթե ՄԻԵԴ-ը գտնում է, որ գանգատն ընդունելի է, ապա նա, իր գործառնական պարտականությունների իրականացման հետ մեկտեղ, փորձ է անում հասնել կողմերի միջև բարեկամական կարգավորման: Այն դեպքում, երբ գործի ընդունելիության մասին որոշում կայացնելուց հետո բարեկամական կարգավորման համաձայնություն չի կնքվում և գործը քննության ենթակա գործերի ցուցակից չի հանվում, ապա ՄԻԵԴ-ը ըստ էության վճիռ է կայացնում:

ՄԻԵԴ-ը կարող է գալ եզրահանգման, որ դիմումատուի նկատմամբ տեղ է գտել Եվրոպական կոնվենցիայի և (կամ) նրա դրույթների խախտում կամ, ընդհակառակը՝ նման ոտնահարում չի եղել: ՄԻԵԴ-ում գործի քննության հետ կապված վերջնական վճիռն ընդունվում է դռնփակ խորհրդակցության ժամանակ: Վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, իսկ պատճենները՝ կողմերին, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, երրորդ կողմերին և անմիջականորեն շահագրգիռ այլ անձանց:

Երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների դերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացում», ենթավերնագիրը վերաբերում է ՀՀ պետական մարմինների և ՀՀ լիազոր ներկայացուցչի մասնակցությանը ՄԻԵԴ-ի կողմից իրականացվող դատաքննությանը, նրանց իրավունքներին ու պարտականություններին վճիռների կատարման գործընթացում:

Եվրոպական Խորհրդում ՀՀ լիազոր ներկայացուցիչը պետք է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում դատական լուսմների ժամանակ ներկայացնի և պաշտպանի մեր հանրապետության շահերը, ՀՀ Կառավարությանը, ՀՀ Նախագահին ներկայացնի ներքին օրենսդրության բարեփոխմանն ու զարգացմանը, Եվրոպական չափանիշների համապատասխանեցմանն ուղղված առաջարկներ: Ինչ վերաբերում է Եվրոպական դատարանի վճիռների կատարմանը, ապա ՄԻԵԴ-ում ՀՀ լիազոր ներակայացուցիչը Եվրոպայի Խորհրդում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուց-

չին պարբերաբար տեղեկացնում է դատարանի վճիռների կատարման գործընթացի մասին՝ Նախարարների Կոմիտեին համապատասխան զեկույցներ կայացնելու համար:

ՄԻԵԴ-ի դատական ակտերի կատարման գործընթացն ազգային իրավական համակարգի շրջանակներում հնարավորինս կատարելագործելու համար, հարկ ենք համարում առաջադրել հետևյալ հիմնադրույթը. *իրավակիրառ պրակտիկայում ծագող անհարկի տարածայնություններից խուսափելու, ինչպես նաև անհրաժեշտ միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու տեսանկյունից նպատակահարմար է միջազգային իրավական հարթությունում մշակել և կիրառման մեջ դնել իրավական խորհրդարվության ինստիտուտի առավել գործնական մեթոդներն ու եղանակները:*

Երրորդ՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի գործունեության բարեփոխման ուղիները» ենթավերնագրում անդրադարձ է կատարվում այն հիմնական բարեփոխումներին, որոնք առավել արդյունավետ կդարձնեն ՄԻԵԴ-ի գործունեությունը:

2000թ. նոյեմբերին ստեղծված աշխատանքային խումբը, որում ընդգրկված էին ՄԻԵԴ-ի, Քարտուղարության, Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի, անդամ պետությունների ու ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներ, առանձնացրեցին վերափոխման համար մի քանի ուղղություններ՝

1) պետք էր լուծել ՄԻԵԴ-ի ծանրաբեռնվածության խնդիրը՝ պարզեցնելով բողոքների քննության գործընթացը, 2) պետք էր ստեղծել պայմաններ՝ Եվրոպական կոնվենցիայով նախատեսված մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների ներպետական մակարդակով առավել արդյունավետ պաշտպանության համար, 3) կատարելագործել ՄԻԵԴ-ի վճիռների կատարման ու կիրառման գործընթացը, մասնավորապես՝ այսպես կոչված «կլոն» գործերով, քանի որ միայն 2003թ. ընթացքում նման վճիռները կազմել են ՄԻԵԴ-ի կողմից կայացված վճիռների մոտ 60%-ը:

Եզրակացությունում ներկայացվում են ատենախոսության արդյունքները, որոնք հանգում են հետևյալին.

1. Անհրաժեշտ է ընդլայնել ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերի պրակտիկ կիրառության շրջանակները՝ արդարադատության ոլորտից տարածվելով նաև դեպի օրենսդիր և իրավակիրառ ոլորտներ: Մասնավորապես, միայն 2012թ. Ազգային ժողովում քննարկման ներկայացված օրինագծերից վեցում, հիմնավորումների հատվածում արտացոլված են եղել ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերը: Այս հանգամանքը հաշվի առնելով, ինչպես նաև նկատի ունենալով ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերի կիրառման շրջանակների ընդլայնման միջոցով միջազգային իրավական չափանիշներին առավել համահունչ իրավական համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը, նպատակահարմար է այդ ակտերի կիրառման, դրանցով ղեկավարվելու իրավական հիմքեր նախատեսել նաև օրենսդիր ու գործադիր

իշխանությունների գործառույթների բնականոն իրականացման համար:

2. Անհրաժեշտ է մշակել լծակներ՝ կանխելու համար ՄԻԵԴ-ի վճիռների և Եվրոպական կոնվենցիայի դրույթների ձևական վկայակոչումը: Մասնավորապես՝ դատական համակարգում ՄԻԵԴ-ի նախադեպային վճիռների և Եվրոպական կոնվենցիային հղումների առնչությամբ վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քրեական գործերով կայացված դատական ակտերում ակնհայտ է վերաքննիչ դատարանի «բացասական» ցուցանիշը՝ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշմանը կամ Եվրոպական կոնվենցիայի համապատասխան հոդվածին արված հղումներին հնարավորինս սակավաթիվ դեպքերում չանդրադառնալու միտումը: Եթե առաջին ատյանի պարագայում այս ցուցանիշը զրոյական է, Վճռաբեկ դատարանի դեպքում՝ 6 դատական ակտ, ապա Վերաքննիչ ատյանի դեպքում՝ 10 դատական ակտ: Եթե հաշվի առնենք Վերաքննիչ դատարանի վճիռների ցածր թվաքանակը, ապա ստացվում է, որ Վերաքննիչ ատյանի դեպքում կողմի ներկայացված հղումների «անտեսումը» տեղ ունի վճիռների 77%-ում, մինչդեռ Վճռաբեկ ատյանի դեպքում՝ միայն 21%-ում:

Քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերում ևս «բացասական» է Վերաքննիչ դատարանի՝ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշմանը կամ Եվրոպական կոնվենցիայի համապատասխան հոդվածին արված հղումներին անդրադառնալու միտումը: Վերաքննիչ ատյանի դեպքում կողմի հղումների «անտեսումը» արձանագրվել է վճիռների 67%-ում, առաջին ատյանի դատարանի դեպքում՝ 45%-ում, իսկ Վճռաբեկ ատյանի դեպքում՝ միայն 9%-ում :

3. Պետք է դատավորների չարաշահումների, ապօրինի գործողությունների, գործի վարույթի անհարկի ձգձգումների և այլ նմանատիպ արարքների համար, ՀՀ Քր. օր-ի 352 հոդվածից բացի, որը պատիժ է սահմանում դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու համար, նախատեսել նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ ՄԻԵԴ-ի վճիռներին և Եվրոպական կոնվենցիայի դրույթներին անհարկի հղումներ կատարելու, դրանք շահադիտական կամ այլ անձնական նպատակներով կիրառելու համար, ինչը զսպիչ գործառույթ կկատարի դատավորների կողմից անհիմն ու անարդար, կողմնակալ վճիռների կայացման դեպքում: Տվյալ դեպքում տեղին կլինի նաև բարոյական վնասի փոխհատուցման նախատեսումը:

4. Հաշվի առնելով ՀՀ տարածքային համեստ տվյալները, արտագաղթի տարեցտարի ավելացող ցուցանիշը և ռազմավարական դիրքը՝ ինչպես Սահմանադրության, այնպես էլ այլ հարակից օրենքներում սահմանել, որ ոչ միայն հողի, այլև բնակարանի, բնակելի տան սեփականատեր Հայաստանի Հանրապետությունում կարող է լինել միայն ՀՀ քաղաքացին:

5. ՀՀ քրեակատարողական օրենսգրքում սահմանել, որ դատապարտյա-

լի և դատական ատյանների, այդ թվում նաև ՄԻԵԴ-ի միջև նամակագրությունը ենթակա չէ բացման ոչ մի պարագայում, անկախ՝ դրա բովանդակությունից: Նշված օրենսդրական դրույթը տարածվում է նաև այն գրագրությունների վրա, որոնք ուղղված են պետական իրավասու մարմիններին կամ դատական ատյաններին և վերաբերում են դատական կամ արտադատական կարգով վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության վիճարկմանը:

6. Առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ ատյանների համար նախատեսել միանման ժամկետ՝ վճիռը դատական նիստին չներկայացած կողմին կամ կողմերին պատվիրված նամակով ուղարկելու համար՝ բացառելով տարբերակված մոտեցումը և «ողջամիտ ժամկետ» եզրույթի կիրառումը:

7. ՀՀ օրենսդրությամբ նախատեսել ՄԻԵԴ-ի վճռի հիման վրա գործի վերանայման և վարույթի նորոգման կառուցակարգեր:

8. Օրենսդրորեն ամրագրել դրույթ՝ համաձայն որի տվյալ կամ նմանատիպ գործով ՄԻԵԴ-ի վճռին հակասող դատական ակտը համարվում է չեղյալ:

Վերոշարադրյալն այն հատուկ բնույթի միջոցառումներն են, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ են մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության ուժեղացման ու կայացման համար նախադրյալներ ստեղծելու, ինչպես նաև՝ այս ոլորտի օրենսդրական դաշտը եվրոպական օրենսդրությանը համապատասխանեցնելու համար:

Արենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակված աշխատություններում՝

1. «Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական-իրավական միջոցները՝ միջազգային իրավական համատեքստում», Հանրային կառավարում N 4/2012, Երևան, էջ 137-149:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության, իրավապահ մարմինների և դատարանների դերը մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների կատարման գործընթացում», Արդարադատություն դեկտեմբեր 4(19)/2012, Երևան, էջ 48-52:

3. «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների իրավական արժեքը», Օրինականություն, //ՀՀ Դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես N 76/ 2013, Երևան, էջ 51-56:

4. «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիմելու իրավական հիմքերը», Հանրային կառավարում N 1/2013, Երևան, էջ 111-124:

5. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանին ուղղված դիմումների բովանդակությանն ու ձևին ներկայացվող պահանջները», Օրինականություն //ՀՀ Դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, N 86/2015, Երևան, էջ 34-41:

ГЮРДЖЯН МАРИНЕ САМВЕЛОВНА

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ ПРАВ В ЕВРОПЕЙСКОМ СУДЕ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА

РЕЗЮМЕ

Настоящая диссертация посвящена комплексному и разностороннему анализу в области прав граждан на обращение в Европейский суд по правам человека, осуществлению эффективной защиты своих прав, восстановлению нарушенных прав и возмещению убытков. Из содержания работы становится очевидным, что в настоящее время в Республике Армения имеются пока еще полностью не раскрытые и не решенные многочисленные проблемы, касающиеся всестороннему обеспечению прав граждан на обращение в Европейский суд по правам человека, где есть насущная необходимость комплексного анализа, оценки результатов и обеспечения всесторонних решений, представления научно обоснованных предложений, которые могут иметь ценное научно-практическое значение. В Республике Армения в настоящий период государственное регулирование прав граждан на защиту прав в международных органах защиты прав человека, в том числе и в Европейском суде по правам человека, в большей мере основана на политике возмещения. Определенная часть прав и гарантий человека и гражданина обращаться в Европейский суд по правам человека в Армении не имеют практического применения.

Объектом исследования являются проблемы правового регулирования защиты прав и свобод человека и гражданина в Республике Армения в целом, и на международном уровне, в частности в Европейском суде по правам человека, пути развития национального законодательства в области защиты прав и свобод человека.

Предметом исследования являются теоретические и практические представления конституционно-правовых и административно-правовых аспектов защиты прав и свобод человека в международных органах защиты прав, возможности обращения в Европейский суд по правам человека, а также определенные предпосылки в практике правового регулирования данного вопроса в Республике Армения.

Целью исследования является осуществление всестороннего анализа и оценка тех правовых вопросов, которые непосредственно касаются процесса обращения ЕСПЧ или в иную международную организацию для защиты прав и свобод человека, прецедентным судебным актам ЕСПЧ и соотношению норм международного права, национальной правовой системы и правоприминительной практики. Целью исследования является также представление преспективы развития внутригосударственных правовых норм материального и процессуального законодательства, разработка проекта основных норм правовых актов и представление путей коренного улучшения правоприминительной практики, имплементация прецедентных решений ЕСПЧ в национальную правовую систему и представление практических решений, основанных на научно

обоснованном, испытанном в конституционно-правовой практике других стран опыте с учетом особенностей нашей правовой системы.

Для достижения указанных целей выдвинуты следующие задачи:

- Исследовать теоретические обоснования юридического фундамента института прав граждан обращаться в Европейский суд по правам человека, предоставить собственные тезисы;

- Предоставить комплексную юридическую характеристику прав граждан или людей защищать свои права в международных органах защиты прав человека;

- Анализировать законодательство обеспечения прав граждан и иных лиц по обращению в Европейский суд по правам человека в Республике Армения в сравнении с требованиями международного права и выявлять новые, непримененные подходы;

- Выявить современные проблемы и решения интеграции международных правовых актов о защите прав человека и гражданина в правовую систему Республики Армения

- Выявить законодательные пробелы и несоответствия в сфере защиты прав и свобод человека и гражданина в Республике Армения;

- Обработать законодательные и практические решения обеспечения защиты прав и свобод человека и гражданина в Республике Армения.

В процессе исследования автор использовал различные методы, в том числе: исторические, диалектические, аналитические, юридическо-сравнительные, логико-лингвистические, системно-структурные и др. В результате одновременного применения этих методов было возможно достичь реализации цели диссертации и решения выдвинутых задач.

Научная новизна состоит в том, что диссертация наряду с отечественными исследованиями в первый раз систематизировано и разносторонне выявляет проблемы и решения обеспечения защиты прав и свобод человека и гражданина в Республике Армения в период строительства правовой страны в условиях рыночных отношений. Впервые делается попытка исследовать и осмыслить институт обеспечения защиты прав и свобод человека и гражданина в международных органах защиты прав в Республике Армения, предоставляя юридические определения соответствующих понятий, выявляя существующие неопределенности и пробелы, что дало возможность обеспечить принципиально новые решения.

Исходя из исследований вышеприведенных задач, были обработаны и представлены правовые и практические предложения, для эффективного совершенствования института обеспечения защиты прав и свобод человека и гражданина в Республике Армения, а также защиты прав на международном уровне.

Основные положения диссертации рассмотрены на заседании кафедры юриспруденции Академии государственного управления Республики Армения и отражены в опубликованных автором научных статьях.

Диссертация состоит из введения, трех глав, содержащих девять параграфов, заключения, списка литературы.

MARINE SAMVEL GYURJYAN

**MODERN PROBLEMS OF PROTECTION OF THE RIGHTS IN THE
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS**

SUMMARY

The dissertation is devoted to complex and comprehensive analysis of the rights of citizens to appeal to the European Court of Human Rights, the implementation of effective protection of their rights, restoration of violated rights and detriments. From the content of the work it becomes obvious that currently in the Republic of Armenia there are yet many unrevealed and unsolved issues, related to the comprehensive support of the rights of person to appeal to the European Court of Human Rights, where there is an urgent need for a comprehensive analysis, evaluation of results and secure comprehensive solutions of presented scientifically proved proposals that may have valuable scientific and practical importance. At present, in the Republic of Armenia the state regulation of the rights of citizens to protect their rights in the international bodies of human rights protection, including the European Court of Human Rights, mostly is based on the policy of compensation policy. In Armenia, a certain part of the rights and guarantees of human and citizens' to appeal to the European Court of Human Rights do not have a practical application.

Research object: issues of legal regulation of the rights and freedoms of person and citizen in the Republic of Armenia as a whole and at international level, in particular the European Court of Human Rights, the ways of development of national legislation concerning to the protection of human rights and freedoms.

Research subject: theoretical and practical ideas about the constitutional-legal and administrative-legal aspects of the protection of human rights and freedoms in international bodies of human rights protection, the possibility of appealing to the European Court of Human Rights, as well as some background in the practice of legal regulation of this issue in the Republic of Armenia.

Research aim: the implementation of a comprehensive analysis and evaluation of the legal issues that directly relate to the process of applying to the ECHR or any other international organization of the protection of human rights and freedoms, the ECHR case-judicial acts and to the ratio of the norms of international law, national legal systems and law enforcement practice. The aim of the research is the presentation the perspectives of development of domestic legal norms of substantive and procedural law, drafting of basic norms of legal acts and presentation ways of radically improving the law enforcement practice, the implementation of precedent decisions of the ECHR in the national legal system and the presentation of practical solutions based on scientifically reasoned, tested in the Constitutional-juridical practical experience of other countries, taking into account the features of our legal system.

To achieve these objectives, put forward the following objectives:

- research the theoretical substantiation of the legal foundation of the Institute of the rights of citizens to appeal to the European Court of Human Rights, represent own theses;

- to provide the comprehensive legal characteristics of the rights of citizens or people to defend their rights in international bodies of human rights protection;

- to analyze the legislation of ensuring the rights of citizens and other persons applying the European Court of Human Rights in the Republic of Armenia in comparison with the requirements of international law and to identify new, non-use approach;

- to bring out current issues and solutions of integration of international legal instruments on the protection of human and civil rights to the legal system of the Republic of Armenia

- to bring out legislative gaps and inconsistencies in the sphere of protection of the rights and freedoms of man and citizen of the Republic of Armenia;

- to identify the legal and practical solutions to protect the rights and freedoms of man and citizen in the Republic of Armenia.

During the research, the author used a variety of methods, including historical, dialectical, analytical, legal-comparative, logical-linguistic, systemic and structural, and others. As a result of the simultaneous application of these methods, it was possible to achieve the objective of the dissertation and the solutions of put forward problems.

The scientific innovation of the thesis consists in the fact that the thesis along with native researches, for the first time systematically and versatile identify problems and solutions of the protection of the rights and freedoms of man and citizen in the Republic of Armenia in the period of construction of the legal country. For the first time, is doing an attempt to explore and understand the institution of protecting the rights and freedoms of man and citizen in the international bodies rights protection in Armenia, providing legal definitions of the relevant concepts, identifying the existing uncertainties and gaps, making it possible to provide entirely new solutions.

On the assumption of the tasks above, the legal and practical suggestions for effective improvement of the institution of protecting the rights and freedoms of man and citizen in the Republic of Armenia, as well as the protecting the rights at the international level, were processed and presented,

The main provisions of the dissertation were discussed at the meeting of the Chair of Law of the Public Administration Academy of the Republic of Armenia and were reflected in the scientific articles published by the author.

The thesis consists of an introduction, three chapters, containing nine paragraphs, conclusions, bibliography.